

Мовсисян Лилит Размиковна
(Ереван, Армения)

СОВРЕМЕННАЯ ЛЕКСИКА АЗЕРБАЙДЖАНСКОГО ЯЗЫКА: ЯЗЫК ЭЛЕКТРОННЫХ СМИ

Аннотация

В статье коротко говорится об азербайджанском языке как одного из тюркских языков, об истории лексики азербайджанского языка, о современной лексике, о методах развития и обогащения лексики. Проанализируются пути заимствованных слов и роль заимствованных терминов в развитии лексики, особенно лексики печати и электронных СМИ.

Ключевые слова: азербайджанский язык, лексика, обогащение лексики, заимствования, язык электронных СМИ.

Lilit Movsisyan
(Yerevan, Armenia)

MODERN VOCABULARY OF AZERBAIJANI LANGUAGE: THE LANGUAGE OF MASS MEDIA

Abstract: In the article it is spoken about Azerbaijani language as one of the Turkish languages, its vocabulary, history, the methods and means of enrichment and development of its modern vocabulary. The ways of penetration of loanwords and the role of the loan terms in the development of the language vocabulary have been analysed, especially in the language of the press and mass media.

Keywords: Azerbaijani language, vocabulary, development, terms, mass media.

ԺԱՍՆԱԿԱԿԻՑ ԱՊՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԵՋՈՒՆ

Բոլոր թյուրքական լեզուները կազմում են մերձավոր լեզուների խումբ, որը բնորոշվում է ընդհանուր ծագումնաբանական և տիպաբանական գծերով: Ցեղակից լեզուները միևնույն սկզբնական լեզվի պատմական ճյուղավորումներն են, որոնք երկարատև առանձնության հետևանքով կրելով ինքնուրույն պատմական փոփոխություններ՝ իրարից հեռացել են: [1, էջ 8]

Ըստ Ն.Բասկակովի դասակարգման՝ թուրքերենը, ադրբեջաներենը և թուրքմեներենը մտնում են թյուրքական լեզուների արևմտախոսնական ճյուղի հարավ-արևմտյան կամ օղուզական խմբի մեջ, որոնք ունեն ընդհանուր ձևաբանական, հնչյունական և բառապաշարային գծեր: [2, սր. 230]

Համաձայն Ն.Բասկակովի՝ ադրբեջաներենն իր արմատներով հարում է 8-10-րդ դդ. Միջին Ասիայի օղուզական ցեղերի լեզվին, որն էլ մի քանի ժամանակակից թյուրքական լեզուների համար եղել է նախալեզու: Ադրբեջաներենին ամենամոտ ցեղակից լեզուն թուրքերենն է: Սակայն իրենց զարգացման ընթացքում դրանք ստացել են նշանակալի տարբերություններ:

Բառապաշարը լեզվում եղած բառերի ամբողջությունն է: Ըստ գործածության ոլորտների՝ տարբերակվում են համագործակցական և

մասնագիտական բառեր: Ըստ գործածության հաճախականության՝ տարբերվում են գործուն (ակտիվ) և ոչ գործուն (պասիվ) բառապաշարային շերտեր: Ըստ ծագման աղբյուրի՝ տարբերակվում են 2 հիմնական շերտեր՝ բնիկ և փոխառյալ բառեր: Բառապաշարի հարստացմանն ուղղված մշակույթի փոփոխությունները տեղի են ունենում և բառակազմության, և փոխառությունների հաշվին:

Ըստ Ա.Ղենիդիզիադեի՝ գրական աղբբեջաներենի ծագման և զարգացման պատմությունը կարելի է բաժանել երեք շրջանի. 1) համաժողովրդական լեզվի հիման վրա աղբբեջաներեն լեզվի ձևավորում, 2) ազգային լեզվի հիման վրա միասնական գրական լեզվի ստեղծում և կայունացում 3) աղբբեջաներենի վերածակվորում պետական լեզվի (խորհրդային շրջան): [4, Եր. 251-260]

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ եթե գրական աղբբեջաներենի ձևավորման մեջ մեծ դեր է ունեցել օղուզական տարրը, ապա համաժողովրդական լեզվի կազմավորման մեջ՝ վաղ ըրփչաղական տարրը: [5, Եր. 5] Խորհրդային թյուրքագետների մի մասի կարծիքով գրավոր գրական աղբբեջաներենը ծագել է 12-րդ դարում: Սակայն պարզ չէ, թե նշված շրջանում աղբբեջաներենն ինչպիսի՞ առանձնահատկություններ է ունեցել, հատկապես բառապաշարային ինչպիսի՞ բնութագրումներ է ունեցել: Գլխավորապես բուն թյուրքական և արաբապարսկական բառեր ունեցող աղբբեջաներենի բառապաշարի համար խորհրդային շրջանը նշանավորվում է որպես զարգացման և հիմնական ձևավորման փուլ: [6, Եր. 9-20]

Պետք է նշել, որ խորհրդային շրջանում գրական լեզվի զարգացումը, հատկապես բառապաշարի հարստացումը կապված է որոշակի փուլերի հետ: Առանձին-առանձին սոցիալ-տնտեսական, մշակութային և գիտատեխնիկական առաջընթացները լեզվի վրա որոշակի հետք են թողել, և խորհրդային շրջանում բառապաշարի զարգացման գործընթացը կարող ենք բաժանել երկու փուլի: Առաջին փուլը ընդգրկում է 1920-40-ական թթ., իսկ երկրորդ փուլը՝ 1940-80-ական թթ.: Առաջին փուլը՝ 1920-40-ական թթ., համարվում է գրական աղբբեջաներենի համակարգման փուլ: [7, Ե. 17] Այս շրջանում արաբապարսկական բառերը կիրառվում էին տարբեր նպատակներով, օրինակ գեղարվեստական ստեղծագործություններում: Ինչ վերաբերում է տերմիններին, ապա այս ոլորտում մեծ էր առաջին հերթին ռուսերենի ազդեցությունը: Այսինքն՝ արաբապարսկական տերմինները փոխարինվում են ռուսերեն տերմիններով. օրինակ՝ *təmsil-assimilasiya*, *sövtiyyat-fonetika*, *nəhv-sintaksis* և այլն: Սրանց զուգահեռ կիրառվում էին նաև թյուրքական ծագում ունեցող բառեր, որոնք հատկապես լայն կիրառություն ունեին ժամանակի մտավորականների կողմից:

Խորհրդային շրջանում աղբբեջաներենի զարգացման երկրորդ փուլը՝ 1940-80-ական թթ., համարվում է գրական աղբբեջաներենի ծաղկման շրջան: Այս փուլի ամենաբնորոշ գծերն են բառակազմական հնարավորությունների մեծացումը և ռուսերեն փոխառությունների հաշվին գրական լեզվի տերմինաբանական հնարավորությունների հարստացումը: Նշենք մի հետաքրքիր միտում. լայն տարածում չստացած մի շարք ռուսերեն բառեր փոխարինվում են լեզու վերադարձած արաբապարսկական բառերով:

Աղբբեջանում ազգային լեզվի համար պայքարը սկսվել է 1991թ. անկախանալուց կարճ ժամանակ անց՝ դեռևս 1992թ.: Առաջին նախագահ Այազ Մուբալիբովի նախագահության ժամանակ որոշում ընդունվեց կիրիլական տառագրությունից (графика) լատինականին անցնելու մասին: Գործընթացը շարունակվեց նաև հաջորդ նախագահ Էլչիբեյի ժամանակ, սակայն այն համակարգված չէր: Այս ամենին բոլորովին այլ ուղղություն հաղորդեց Յեյդար

Ալիևը: Դեռևս ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության մեջ ամրագրված էր, որ ադրբեջաներենը պետական լեզու է: 1995թ. Ադրբեջանի Սահմանադրությամբ ադրբեջաներենն հռչակվում է պետական լեզու: Նույն 1995թ. օգոստոսի 1-ին Ադրբեջանի նախագահ Յ. Ալիևի հրամանագրով ադրբեջաներենով հրատարակվող բոլոր թերթերը պետք է անցնեին լատինական տառագրության: Նշենք, որ մինչ այդ ադրբեջաներենը, ինչպես նաև ԽՍՀՄ մյուս թյուրքախոս ժողովուրդների այբուբենների համար կիրառել են կիրիլական տառագրությունը: Հարկ է ավելացնել, որ 1929-1938թթ. ադրբեջաներենի այբուբենը եղել է լատինատառ, իսկ դրանից առաջ՝ արաբատառ: Ներկայիս այբուբենը համապատասխանում է թուրքերենի այբուբենին, բացառությամբ ռ, ք, և գ տառերի, որոնք թուրքերենում բացակայում են:

Ադրբեջանի անկախացմամբ երկրում սկսվում են նոր լեզվական գործընթացներ. սկսում է աստիճանաբար նվազել ռուսաց լեզվի դերը, և զուգեռեռաբար մեծանում է այլ օտար լեզուների դերը: Հատկապես զգալի է անգլերենի արագ տարածումը: Խանութների և ժամանցային վայրերի ցուցանակները ևս շատ հաճախ հանդիպում են անգլերեն բառերով:

Այսօր ադրբեջանական հասարակությունում ամենաշատ քննարկվող հարցերից են հենց լեզուն և նրա կիրառումը: Հարցի հանդեպ մոտեցումը միանշանակ չէ: Ոմանք կարծում են, թե լեզվի մեջ նոր բառերի, արտահայտությունների և տերմինների կիրառումը նորմալ երևույթ է: Սակայն կա նաև հակառակ կարծիքը. օտարալեզու բառերից օգտվելը նվազեցնում է ոչ այնքան հարուստ ադրբեջաներենի դերը:

Բառապաշարում տեղի ունեցող փոփոխություններն առաջին հերթին կուտակվում են մանուկում: Հայտնի է, որ կապված գիտատեխնիկական առաջընթացի, հատկապես համակարգչային տեխնիկայի զարգացման հետ, լեզվի մեջ թափանցում են նոր բառեր և արտահայտություններ: Օրինակ՝ videomagnitofon, studiya, sputnik, stanok, kompüter, sayt, internet, disk, սակայն սկսած դեռևս խորհրդային շրջանից, մի շարք լեզվաբաններ փորձել են նմանատիպ բառերը թարգմանել, օգտագործելով ադրբեջաներենի ներքին քերականական հնարավորությունները՝ օրինակ video բառը փոխարինել təsvir բառով:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարում պահվում են արժեքավոր տեղեկություններ ժողովրդի ծագման ու կազմավորման ընթացքի, նրա կենցաղի ու մշակույթի մասին: Լեզուների բառապաշարներն ուսումնասիրողների աշխատություններում բազմաթիվ անգամ նշվել է լեզվի զարգացման և կատարելագործման անմիջական կախվածությունը ժողովրդի հասարակական կյանքի զարգացումից: Ադրբեջաներենի պատմության հետ կապված կան տարբեր կարծիքներ և ենթադրություններ: Լեզուն և դրա կրող էթնոսը՝ ադրբեջանցիները, վերջնական տեսքով կազմավորվել են միայն 20-րդ դարի սկզբում: Թուրքերենի և թուրքմեներենի ազգակից և դեռևս վերջնականապես չձևավորված ադրբեջաներենի բառապաշարի հիմքում մինչև 19-րդ դարի վերջը գերակշռում էին բուն թյուրքական և արաբապարսկական բառերը: Միայն Ադրբեջանի խորհրդայնացումը նոր, նպաստավոր պայմաններ ստեղծեց ադրբեջաներենի՝ որպես առանձին գրական լեզվի վերջնական ձևավորման և զարգացման համար: Խորհրդային շրջանում լեզվի հարստացման գործում բացահայտ էր ռուսաց լեզվի հսկայական ազդեցությունը: Բառապաշարը հարստանում է ամենատարբեր ոլորտներում գործածվող ռուսերեն բառերով՝ դրանով իսկ դուրս մղելով բազմաթիվ արաբապարսկական բառեր:

Հատկանշական է, որ այս փուլում բուն թյուրքական բառերն ավելի քիչ էին դուրս մղվում՝ երբեմն վերածվելով պարզապես հնաբանությունների: Ադրբեջանի անկախացումից հետո լեզվի զարգացման մեջ նոր փուլ է սկսվում: Ադրբեջաներենում փորձ է արվում սկսել ինքնամաքրման գործընթաց՝ որպես հիմք վերցնելով բուն թյուրքական տարրերը: Այս բոլոր գործընթացներում զգալի է աշխարհաբաղաբանական գործոնի նշանակությունը:

Список использованных источников:

1. Գ.Բ.Ջահուկյան, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Ե. 1992, էջ 8
2. Баскаков Н.А., Введение в изучение тюркских языков, М. 1969, стр. 230
3. Демирчизаде А.М., “О периодизации истории азербайджанского литературного языка”, Структура и история тюркских языков, под ред. Э.В. Севортяна М. 1971
4. В. Гукасян, В. Асланов, Исследования по истории азербайджанского языка дописьменного периода, Баку 1986
5. А. Асланов, Обогащение словарного состава азербайджанского литературного языка в советский период, Баку 1954
6. N. Xudiyev, Azərbaycan ədəbi dili lüğət tərkibinin inkişafı (sovet dövrü), Bakı 1986

Зоиров З., Абдурахмонова С., Шукуров А.
(Термиз, Ўзбекистан)

АНТОНИМЛАРНИНГ УСЛУБИЙ ҚЎЛЛАНИШИ

Антонимлар нутқда кенг қўлланувчи лексик воситалардан ҳисобланади. Тилда антонимия ходисаси лексик, сўз ясовчи қўшимчалар, иборалар, гап тузилиши соҳаларида ҳам учрайди.

Антонимларни белгилашда асосий ўлчов-лексик маъно, яъни сўзларнинг зид маъноларини билдириши. Икки сўзнинг антонимлиги маънодаги зидликка кўра экани маълум. Демак, икки сўзнинг ўзаро антонимлиги уларнинг конкрет бир маъносига зидликка асосланади¹³.

Антонимлар нутқ таъсирчанлиги маънони аниқлаштириш, қарама-қарши белги-хусусият, қарашларни тиниқ ва қабартириб ифодалаш имконини беради. Шунинг учун ҳам ижодкорлар ўз асарларида улардан унумли фойдаланадилар. Чунончи, тарихий мавзудаги шеърий дostonларда антонимлар қўлланишларининг баъзи кўринишлари қуйидагичадир.

1. Антонимлар такрори қўшма гап ҳосил қилиб, маънони умумлаштириб кўрсатади. Масалан:

Келар бўлди унга энди бутун атроф,
Ҳар беморда унга истак, ҳар соғда ҳоҳиш.
(«Ҳаким ва ажал»)

Бу парчада «соғ», «бемор» антонимлари кўпчилик маъносини жамлаб ифода этади. Эътибор берилса, бу ерда «истак», «ҳоҳиш» синонимлари ҳам

¹³ Қаранг: Раҳматуллаев Ш. ва б. Ўзбек тили антонимларинг изоҳли луғати. –Т.: “Ўқитувчи” 1980, 9-б; Ўзбек тили лексикологияси -Т.: “Фан” 1981, 254-б.